

Եզրակացություն

ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Հինք ընդունելով ՀՀ ԿԲ խորհրդի 10 հուլիսի 2007 թվականի N 205-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումների» 1.16 կետի պահանջները՝ «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտը Ձեզ է ներկայացնում ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին» համապատասխանության վերաբերյալ սույն եզրակացությունը:

Հաշվի առնելով այս և նախորդ տարիների ընթացքում Ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքները՝ մասնավորապես ուսումնասիրված ներքին իրավական ակտերը, վերստուգված գործարքները և Բանկի ընդհանուր գործունեությունը, կարծում ենք բանկի ներքին հսկողության համակարգը, ընդհանուր առմամբ, ապահովում է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով» սահմանված ներքին հսկողության հիմնական նպատակների իրականացումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԿԲ կողմից սահմանված չեն բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների համապատասխանության գնահատման չափանիշներ, և առաջնորդվելով Ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքների արդյունքում ձևավորված կարծիքով, Ներքին աուդիտը բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին» գնահատում է բավարար:

Ներքին աուդիտի ղեկավարի տեղակալ



Կ. Ասրյան

15.04.2013թ.